

## Հայտարարություն

2016 թվականի հունիսի 11-ին և դրան հաջորդող յուրաքանչյուր շաբաթ և կիրակի օրերին ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում (Կասյան փողոցի վերին հատված) նախատեսվում է կազմակերպել գյուղատնտեսական մթերքների տոնավաճառներ: Գեղարքունիքի մարզի գյուղացիական տնտեսությունները ցանկության դեպքում անվճար կարող են մասնակցել տոնավաճառներին և Երևան քաղաքի սպառողներին ներկայացնելու բացառապես սեփական արտադրանքը, ինչը կնպաստի արտադրողների և սպառողների համար առավել շահավետ գյուղատնտեսական մթերքների գների ձևավորմանը:

Տեղեկությունների համար զանգահարել 011 230 180 կամ 011 520 641 հեռախոսահամարներով:

ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն